


— Էս երկրումը քո արեւը մէր մտաւ, Աղասի, քո
օրը խաւարեցաւ, քո ճրագը հանգաւ: Թոփի բերանն է,
քո ջանը: Քանի ոտքը խաղաղ է, քանի ջելաւը՝ ձեռիդ,
քեահլան ձին՝ տակիդ, ետրաղ ասպարը՝ վրէդ, քանի
բերնումդ շունչ կայ, ոտումդ՝ թաղաթ, փախիր, գլխիդ
ճարը տես: Սարգարի ֆառաշներին ես սպանել: Դրանց
արիւնը քեզանից կուղեն, դրանց տէրերը հիմիկ կատա-
ղել, իրանց միան ուտում կըլին. ի՞նչ ես փէտացել կանգ-
նել, էլ ո՞ր օրին ես մտիկ տալիս...

Դառած *) արջը վնչացնելով դուրս պրծաւ,
Սարեր, ձորեր սասանում են ձէնիցը,
Անմեղ գառը, ո՞ւր ես կանգնել դու անցաւ,
Քեզ կքրքրի, փախիր նրա ձեռիցը . . . » **)

(շարունակելի)

Թ. Աւայրէգեան



ԲԱԴԱ ԴԻԻՂԻ ԱՌԵՐՈՒՄԸ

(շարունակութիւն)

Ահա և միւս փաստաթուղթը *:

«Յարգելի պ. խմբագիր. Յառայեցի Թիֆլիսի քաղաքային
ոստիկանութեան մէջ 6 տարի. այդ ժամանակամիջոցում, ես
երեւի համապատասխանում էի իմ պաշտօնին, որովհետեւ
իշխանութիւնից դողերին ձերբակալելու և գողացուած իրե-
րը գտնելու համար շատ յաճախ պարգեւ էի ստանում: Յետոյ
ինձ նշանակեցին Մէտեխի բանտի վերահսկիչի օգնականի ժա-
մանակաւոր պաշտօնավար, իսկ յետոյ Գանձակի գաւառի Գե-
տաբէկ աւանի պրիստաւ: Նոյեմբերի 14-ին ես դնացի Գան-
ձակ ներկայացայ գաւառապետին, և ստանալով նրանից 4-րդ
գաւառամասը ընդունելու հրամանագիրը, դնացի իմ ծառա-
յութեան տեղը: Նոյեմբերի 17-ին հասնելով Գետաբէկ, պրիս-

*) Կատաղած:

**) «Վերք Հայաստանի», եր. 82:

* «Մշակ» № 445—4906 Թ. Մայիսի 30. իսկականը տես Тиф-
лисский Лист. № 110. 28 мая.

տաւի պաշտօնը ինձ յանձնելու հրամանագիրը ներկայացրել
 պրիստաւի ժամանակաւոր պաշտօնավար Մուսէի Ալիեւին։
 Պրիստաւ Ալիեւը խնդրեց ինձ շրջել գիւղերը, մինչև թղթերը
 կը պատրաստուեն. ես այցելեցի Ֆրէդովկայ, Ալավեանկա և
 Զարգախու գիւղերը։ Երբ հասայ Զարգախու, նոյեմբերի
 20-ին, բնակիչները ինձ ասացին, որ պրիստաւ Ալիեւը և Շամ-
 խօրսիկին ագիտացիա են անում թուրքերի մէջ, որպէս զի նրանք
 կոտորած սկսեն։ Նոյեմբերի 21-ին ես կրկին վերադարձայ Գե-
 տաբէկ. դեռ Գետաբէկ չը հասած, Ալավեանկա գիւղի բնա-
 կիչները յայտնեցին, որ թուրքերը ուզում են գիւղերը յար-
 ձակուել գիւղի վրա։ Այդ ինկատի առնելով, ես 5 պահա-
 պաններով մնացի Ալավեանկա գիւղում։ Երեկոյեան ժամը 7-ին
 այդ գիւղը եկան 800 զինուած թուրքեր և խօք տուին ռուս-
 ներին ձեռք չտալ, բայց կոտրեցին 2 խանութ—Յովսէփեանի
 և Մնացականեանի, տարան 2 ֆուրգօն ապրանք, նախազդու-
 շացնելով դուխաբօրներին, որ նոյեմբերի 22-ին պէտք է աւերեն
 Գետաբէկում հայերի բոլոր խանութները։ Նոյեմբերի 22-ին
 ես Ալավեանկից Զարգախու ուղարկեցի մօտ 30 հոգի հայ,
 իսկ ինքս գնացի Գետաբէկ և խնդրեցի Ալիեւին, որ ինձ յանձնի
 գաւառամասը, որի վերաբերեալ պրիստաւ Ալիեւը յայտնեց,
 որ առ այժմ չէ կարող յանձնել գաւառամասը, որովհետև
 զբաղուած է ուրիշ գործերով։ Ես հայերին տեղեկացրի թուր-
 քերի կողմից դուխաբօրներին ասած լուրը. նոյն օրը, հայերը,
 միջքեր կարողացան, հաւաքեցին իրանց բնտանիքը և գոյքը և
 տեղափոխեցին մօտակայ Ղաղախու գիւղը։ Պրիստաւ Ալիեւը
 և Շամխօրսիկին համոզում էին մնալ իրանց տներում, աւելա-
 ցնելով, որ նոր պրիստաւը «յիմար է», նա ձեզ խաբււմ է,
 նրան չը լսէք և այլն, բայց հայերը չը լսեցին պրիստաւ Ալիե-
 վին։ Երեկոյեան ժամը 7-ին Գետաբէկը շրջապատուեց թուր-
 քերով, և Մնացականեանի խանութից սկսեցին կոտորատել և
 թալանել բոլոր խանութները։ Աւերումը շարունակուեց մինչև
 դոյեմբերի 24-ը։ Երբ ես նկատեցի, որ պրիստաւ Ալիեւը բոլոր
 ժամանակ ագիտացիա էր անում թուրքերի մէջ, ես գնացի
 նրա մօտ և ասացի, որ դա լաւ բան չէ, շատ հայեր են սպան-
 ուել մի օրէն ձեռով պէտք է դադարեցնել կոտորածը։ Ալիեւը
 պատասխանեց, որ հարկաւոր է ոչնչացնել բոլոր հայերին, իբրև
 վնասակար մարդկանց, որ նրանք շատ խորամանկ են և շատ
 յաճախ սպանում են նահանգապետներին, պրիստաւներին և
 պահապաններին։ «Ես ինքս ամբողջ 3 տարի փախստական էի,
 աւելացրեց Ալիեւը, Պարսկաստանում էլ էի, բայց ես եկայ
 խոստովանեցի յանցանքս գլխաւորին և ինձ բոլորը ներեցին».

խիկ հայերը նոյն խիկ չեն ընդունում իշխանութիւնը»։ Նոյեմբերի 25-ին, Երեկոյեան գէմ ինձ մօտ եկան 2 պահապաններ— Աստան Աղառ-բէկով և Բելիկովը և զեկուցեցին, որ հիւանդանոցից, ուր գտնվում են մօտ 60 հայեր, Ալիեվը տարաւ իր բնակարանը, 2 հայ օրիորդներ։ Միւս օրը, վաղ առաւօտեան, ես գնացի նրա բնակարանը, ուր խիւապէս տեսայ 2 հայ օրիորդների յատակի վրա նրա հետ քնած։ Ես հարցրի նրան, թէ ինչու է նա բերել իր բնակարանը այդ օրիորդներին. Ալիեվը պատասխանեց, որ նրանց համար այնտեղ շատ նեղուածք է և վատագուոր, իսկ այստեղից ոչ ոք չի վստահանալ նրանց տանել։ Միւս օրը ես Ալիեվի հետ միասին գնացի գինամիտի պահեստատեղին։ Մենք նկատեցինք, որ հայերը թողել են Ղադախլու գիւղը և տեղափոխուում ենք Զարգախլու գիւղը։ Ալիեվը 2 պահապանների հետ ցած իջաւ և սկսեց ծեծել թուրքերին, որպէս զի նրանք վաղեն հայերի ետեից, բայց թուրքերը հայերին չհատան. այն ժամանակ թուրքերը սկսեցին կողոպտել հայերի գոյքը և աւերել Ղադախլու գիւղը. բոլորը հողի հետ հաւաքարացրին։ Այն ժամանակ ես իսկոյն 2 պահապաններով գնացի Փանձակ և զեկուցեցի այդ բոլորը նահանգապետին, իսկ պահապաններ—Բէլիկովը և Աստան—Աղառ-բէկովը իրանց կողմից գրաւոր կերպով զեկուցեցին դաւաճապետ Աւալիանին պրիստու Ալիեվի մօտին։ Նահանգապետը առաջարկեց դաւաճապետ Աւալիանին իսկոյն ինձ հետ գնալ և քննութիւն կատարել, Փաւառապետ Աւալիանին ինձ հետ ուղևորուեց Փետաբէկ, բայց գեռ Փալլետը կայարանին չը հասած, Աւալիանին առաջարկեց ինձ գնալ Թիֆլիս նրա իրերի ետեից։ Ես բացատրեցի, որ կը գնամ, միայն ոչ հիմա, այլ քննութիւնից յետոյ. դաւաճապետը ասաց ինձ, որ ես անձնապահ աստիճանաւոր եմ և նրա հետ ծառայել չեմ կարող և իրան չը հնազանդուելու պատճառով պաշտօնից կը հեռացնի։ Այգպիսի խիստ հրամանի պատճառով ես ստիպուած էի նրա իրերի ետեից գնալ Թիֆլիս, որը և տարայ Փանձակ։ Մօտ մի շաբաթից յետոյ դաւաճապետը վերադարձաւ Փետաբէկից։ Նա ինչ ասաց նահանգապետին, ինձ յայտնի չէ, միայն ինձ կանչեց դաւաճապետը և նախ հարցրեց. «բերե՞ր իմ իրերը»։ Ես պատասխանեցի «այո»։ «Յետոյ նա ասաց», որ ես իմ «կոչմանը չեմ համապատասխանում»։ Եւ ես այդ օրուանից նշանակուած եմ նահանգական վարչութեան մէջ, ահա արդէն 5 ամիս է, առանց թոշակի։

Որ վարչութեանն էլ զիմում էի պաշտօն խնդրելով—ամեն տեղ իրանց մերժումը պատճառաբանում էին նրանով, որ ես

իմ «կոչմանը չեմ համապատասխանում»:

Կօմմենտարիաները աւելորդ են:

8-րդ քաղաքամասի նախկին պրիստաւ Ալէքսանդր Իօսիֆօվիչ Շեսպելլօ:

Երկու փաստաթղթերից ևս պարզ երեւում է, թէ ինչ հանգամանքում էին կատարւում հայ թուրքահան ընդհարումները:

Անցնենք նորից Բաղային:

2.

Յարձակումն Բաղա գիւղի վերայ: Տներն նրդեհումն: Բնակիչների սարսուփահար փախուսք:

Չորեքշաբթի, 1905 թուի նոյեմբերի 23-ին վաղ առաւօտից թուրքերը հրդեհեցին շրջակայ բոլոր բնաները: Բաղացիք չկարողացան դիմադրել: Թուրքերն աստիճանաբար՝ չորս կողմից մօտենում էին գիւղին: Հրացանաձիգներն իրանց դիրքերումն էին: Գրիգոր քահանայ տէր Աբրահամեանցը, վազվազում էր դիրքից դիրք, ամրացնում էր նրանց, խրախուսում ու քաջալերում էր պաշտպաններին և անում էր կարևոր կարգադրութիւններ: Կեանքը եւում էր: Դիրքում գործում էր և միւս քահանան-տէր Ներսէս Տէր Յարութիւնեանցը:

Բնակիչների մէջ կային այնպիսի հաւատացեալներ, որոնք ըստ հին հայկական սովորութեան, հասարակաց ճգնաժամին, ապաւինում էին միայն ու միայն Աստուծուն: Այսպիսիները Ներսէս քահանային դիրքից բերին եկեղեցի, հսկում կատարեցին, ծնկաչոք աղօթք մատուցին և շատերը հաղորդուեցին: Արանց համար վերջին օրն էր:

Յովհաննէս Շուշանեանցը, Ալլահեար բէգի թողած ձին հեծած արշաւում էր դիրքերը ու, Ալլահեար բէգի առած պատուէրին համաձայն, խտախտ արդելում էր պաշտպաններին մարդ չսպանել:

Ընդհանուր իրարանցում էր տնրում, չկար միատեսակ գործողութիւն, կարգապահութիւնը խիստ և որոշ չէր. չկար այնպիսի մի անձնաւորութիւն, որ իւր հմտութեամբ և հեղինակութեամբ միացնէր ջլատուած ուժերը, իրար համաձայնեցնէր տարբեր գործողութիւնները: Վերջապէս չկար մի անձ, որ կարողանար իւր ձեռքը ժողովել պաշտպանութեան գործը, չկար ծրագրած պաշտպանութիւն.

Թէպէտ, թուրքերը շրջապատել էին գիւղը, բայց դեռ չէին յատահանում ներս խուժել: Սակայն երեկոյեան դէմ,

Զաղեամբ կողմից, դեռ ևս շատ հեռուից հրացանների գնդակներ թափուեցին գիւղի վրայ: Հեռուից իսկ հասկացուեց որ հրացանները Մոսսինի կարգից են: Շատ հեռուից երևացին մի խումբ թուրքեր-հրացանաձիգներ, որոնց գնդակները հասնում էին գիւղ, իսկ բազացոց բերդան հրացանների գնդակները չէին հասնում նրանց: Մոսսինի հրացաններով զինուած այդ խումբն օտար տեղերից եկած անծանօթ մարդիկ էին երևում՝ Զանբեղար կուսակցականներ: Նրանք թուով մօտ 50 հոգի էին: Գուցէ և նրանք վճռեցին Բազայի ճակատագիրը: Տեղացի թուրքերին նրանք սպառնայիքներ էին տալի, հայհոյում էին և ծեծում, որ ներս խուփեն գիւղի մէջ:

Հեռուից դիրք բռնելով՝ Զանբեղարները գնդակէ կարկուտ էին թափում հայոց դիրքերի վերայ, որոնց զոհ գնացին ամենից առաջ Պօղոս Եաւրիեացը՝ Հանդստարանի գիրքում, ապա Ղամբար Յարութիւնեանը և Գալուստ Գրիգորեանը բերուտի հոգի գիրքում: Դիքչի գլխի դիրքում պաշտպանւում էին տէր Գրիգորի և Ղահրաման Աւետեանցի ղեկավարութեամբ: Առաջինի ոտը ծռուեց և երկար ժամանակ կաղում էր, իսկ երկրորդը խէնչալի վէրք ստացաւ երեսում և ուշադնաց եղաւ, որին և համարեցին սպանուած, իսկ նա գիշերը փախաւ: Առաջին զոհերը չամեցրին ժողովրդին, մի խումբ մարդիկ շրջապատեցին նոր սպանուածներին: Հրացանաձիգութիւնն չարաչար շարունակուում էր. նուշանեանի խորհուրդն այլ ևս չգործադրուեց. հայերն սկսեցին մարդիկ սպանել. Հանդսեացի Պօղոս Եաւրիեանը մահից առաջ արդէն երեք թուրք էր սպանել:

Մութն իւր սև քողը սփռում էր Բազայի վերայ, մարդիկ չգիտէին, թէ ի՞նչ է խոստանում նրանց այդ գիշերը. Եւ, աւաղ, Վերի Աղբււրի կողմից թուրքերն արագութեամբ ներս խուփեցին գիւղի ծայրը և առաջին նուագ հրեհեցին շինութիւնները: Սրանք մասամբ ծածկուած լինելով ռուսաց շինութիւնների պէս խոտով կամ ծղօտով՝ գիւրութեամբ վառւում էին և տարածւում: Հարաւային քամին անգամ բազացոց թշնամի էր: Հրեղէն լեզուները երկարացան գէպի երկինք սարսափ ու լոյս սփռելով տարաբաղդ բնակիչներին վերայ, որոնք այդ ժամանակ ընկճուեցին արդէն անողոր ճակատագրի առաջ:

Այդ չարագուշակ րոպէից վերջացաւ արդէն Բազայի գոյութիւնը. կորաւ մի հարուստ գիւղ. ցրուեց նրա տնտեսութիւնը. մարդկային արիւնով ծածկուեց գետինը և սուգի ձայնով լցուեց մթնոլորտը: Երկու կողմից էլ մարդիկ գնդակահար թաւալում էին գետին: Մնողները մոռացան զաւակներին, որ-

գին մոռացաւ հօրը: Գլխահորոյս փախուստ սկսուեց այդիների կողմը: Քսաներորդ դարում, կրկնուեց իններորդ դարի արաբական արշաւանքը:

Բոլոր նշանաւոր տներն անխնայ մասնուեցին բոցավառ կրակին: Այսուեցին մի առ մի Մետրոք քահանայի երկյարկանի տունը, ուր արքունական դպրոցն է իւր կահ կարասիներով. բռնեցին այդ քահանայի 90 տարեկան հօրը՝ Մովսէսին, պահանջեցին ցոյց առլ թէ ո՞ւր են պահած կամ թաղած փողը, արծաթեղէնը, պղնձեղէնը և այլ իրեղէնները, որոնց տիրանալուց յետոյ խէնչալով մորթեցին ծերունուն, զլուխը շարտեցին դուրս փողոց, խոկ անշունչ դիակը ձգեցին այրուող տան կրակի մէջ: Հրդեհեցին սպանուած Պօղոս Եաւրեկանցի երկյարկանի փայտաշէն տունը, Սահակ Ալլահվերդեանի երկյարկանի տունը, Ղահրաման Խաչատուրեանի կղմինդրով ծածկած երկյարկանի տունը, Պօղոս Մերատեանցի երկյարկանի քարաշէն տունը, Մելիք Մերատեանցի, և ուրիշ շատերի տները և այլ շինու թիւններ:

Անատունները անտէր մնացել էին գոմերում կամ թափառում էին փողոցում. յաղթողները քշում տանում էին, կողոպտում էին տները, ով ինչ կարող էր՝ վերցնում էր: Կանայք, աղջկուք, մանկուք, ծեր աղամարդիկ երեք մեծ խմբի բաժանուելով փախան այդիների ձորը: Իսկ ռազմիկ, ընդունակ մարդիկ դեռ ևս մնացին գիւղում, դեռ ևս վրէժխնդիր էին լինում, կոտորում էին թուրքերին, որի ձեռքին մի իր էին տեսնում և խմանում էին որ թուրք է, գետին էին գլորում: Իրանը հայերն էլ միմեանց հետ թուրքերէն էին խօսում, չյայտնուելու նպատակով:

Թուրքերը դրացի լինելով՝ լաւ էին ճանաչում իւրաքանչիւր առն, ուստի ազգեցիկները իրանց կողոպտուած համար վերցրին իւրաքանչիւրը մի քանի տներ և մահուան սպառնալիքով մօտ չէին թողնում այլ թուրքերի: Այսպէս՝ Զագեամի հատարահովիթեան վերայ հաստատած տանուտէրը վերցրել էր Մետրոք քահանայի, Յովհաննէս Շուշանեանցի, Ղահրաման Գաթոյեանցի, Աւէա Բարսեղեանցի, Պօղոս Մերատեանցի տները և գրա համանովն էր մորթուել Մովսէս Մերունին Իրմաշուեցի մի թուրքի ձեռքով:

Արանով չի վերջանում դադանութիւնը: Այդ օրը Բաղաշում սպանուեց Իրմաշուեցի Ղահրաման Իզբաշու եղբայրը, որի արեան վրէժն առնելու համար՝ հետևեալ օրը խուժանի առաջնորդները գտնել տունն տներում, մարագներում և ուրիշ խորշերում թաղնուած մի քանի ծերունիներ ու պատանիներ և

ընդունին շարքով կանգնեցրած Պօղոս Ներատեանցի բարձրագիւր
կալոււմ ու «եա, հաղրաթ Աբառ», ասելով թուցրին ընդունի գը-
լուխներն էլ:

Արպէս վերը յիշուեց, Բաղայի սարսափահար փախստա-
կաններն երեք խմբի բաժանուելով հաւաքուեցին այդ լինելի
ձորի գլուխը: Մութ գիշերին, երբ գիւղը լուսաւորուած էր
հրդեհների բոցերով, թուրքերը յարձակուեցին այդ խմբերի վե-
րայ, որոնք այլ ևս հայրը որդուն, մայրը մանկան, որդին մօրը,
քոյրը եղբօրը չորոնեցին: Խռնուեցին իրար և իւրաքանչիւրն
աշխատում էր իւր գլուխը փրկել... Հասարակաց ինքնապաշտ-
պանութեան հարցը վերջացաւ, կազմակերպուած ջոկուեց, դեր-
քերը դէն ձգուեցին, ամեն ոք իւր անհատական փրկութեան
մասին էր մտածում: Երեք խմբից մինը, որ եկեղեցու մօտ էր
հաւաքուել նոյն գիշերը, նոյեմբերի 24-ի առաւօտը Մանդու-
ռի մօտով Մամուլի թաղով հասել էր Չարդախլու: Երկ-
րորդ խումբը Գիւղայով Արդ-Ղալայ ամրոյի մօտից թափուեց
Չարդախ գետի աւազանը, որ ուղղուի դէպի Նամշահլինու
Ղուլալի գիւղը:

Գիտակ անձինք պատմում են, որ Բաղայի աւերման դոր-
ծում ղեկավար և ներշնչող են հանդիսացել զրացի բէգերից
ոմանք և գիւղացիներից մի քանի առաջաւորները:

Ինչպէս երևում է պատմութեան ընթացքից, յիշեալնե-
րից ոմանք մասնակցել են նաև Չարդախլուի վերայ յարձակ-
ման մէջ, որովհետև հաստատ է, որ Չարդախլուեցիք կռուի
մէջ գերի են վերցնում վերոյիշեալներից Հաջի Ալուն, և զնդա-
կահար անում:

Գամբլուտի դուրի գիւղը պաշտպանող խմբի մէջ
աշխատում էր և Գաւիթ Ներատեանցը: Գոռ կռուի մի ժա-
մանակ սա, երբ անոնում է, որ իւր ընկերներից ոմանք ուղան-
ուել են և ոմանք փախել, իւր փամփուշտներն էլ հատել են
և իւր կեանքին էլ վտանգ է ուղարկում, վճռում է անձնա-
տուր լինել թուրքերին ձեռնալով մահմետականացած: Թուր-
քերն ընդունում են ռիսով: Այս իրողութիւնը խիստ կասկած է
ծնեցնում հայ հասարակութեան մէջ, որ հիմնուելով Ներա-
տեանցի թրքառէր, գողութեան ձգտող բնաւորութեան վե-
րայ, ենթադրում է, թէ նա հարկադրուած կլինէր դաւաճա-
նօրէն յայտնել թուրքերին գիւղի գաղտնիքը, անպատրաստ
դրութիւնը և ինչ: Գուցէ այդպէս էլ եղած լինի, սակայն միջանի
օրից յետոյ Գաւիթ Ներատեանցը նորից վերադարձաւ իւր հա-
մադիւղացիների մէջ, ցոյց տալով որ իւր կեանքն ազատելու
համար է առ երես ընդունել մահմետականութիւնը և զնայել

էր Չարդախլու: Սահայն Դաւիթ Ծերատեանցի արարմունքի վերայ խիստ կերպով է նայել Չարդախլուի խմբապետը և սպանել է տուել:

Բազայի ժողովուրդն ընդունում է և մի այլ դաւաճան-Գրիգոր Քանարեանցին, որ յետոյ սպանուեց ոչ թէ հայերի ձեռքով, այլ թուրքերի, երբ նա գիւղի աւերման չորրորդ օրն իւր Պողոս եղբօր և Յարութիւն Մկրտչեանի հետ գնացել էր Բազա՝ գիւղի դրութիւնից տեղեկանալու: Վերահաս մութն արգելք դառնալով Չարդախլու վերադառնալու՝ երեքն էլ անցնում են Բազա գետի միւս կողմն ապահով տեղ, կրակ են վառում անձրևի պատճառով և թուրքերը կրակի լուսով մօտենում սպանում են Գրիգորին, իսկ միւս երկուսին փախցնում: Թէ որ աստիճան յանցաւոր են յիշեալ երկու անձնաւորութիւնները դաւաճանութեան մէջ՝ դա մնում է հասարակաց խղճմտանքին:

Չորեքշաբթի գիշերը, նոյեմբերի 23-ին ժողովրդի մեծ մասը թէև փախել թաքնուել էր գետի ձորում և քարայրերում, բայց կային մի քանի ծերեր, հիւանդներ, երեխայք, որ պատահամբ կամ ահից յետ էին մնացել և թաքնուել էին գիւղի շինութիւնների խորշերում, մարագների դարմանի առկ, խոտերի մէջ, հորերի մէջ, մի խօքքով՝ ով ուր կարող էր կամ ում ինչպէս կյաջողուէր թաքնուիլ: Հետեւեալ օրը հինգշաբթի, ամսի 24-ին գիւղի մէջ հպարտութեամբ իշխող թուրք խուժանը կալանաւորում էր այդպիսիներին, որոնց կամ սպանում էր կամ գերի վերցնում ու քշում գէպի թուրք գիւղերը:

Խուժանը հինգշաբթի օրը գիւղով միայն չբաւականացաւ, վրէժխնդրութեան հոգւով լին՝ նա իջաւ Խաղնի ձորը, և յարձակուեց Թող փեր փընջան մեծ այրում պատսպարուած 700—800 երկու սեռի և զանազան հասակի մարդկանց վերայ ու սկսեց կոտորածը: Թուրքերն անցան գետի ձախ ափն և այնտեղ դիրք գրաւելով՝ սկսեցին գնդակահարել այրը: Աջ ափում, Կապ կոչուած դժուարամատչելի ժայռում ամրացած երիտասարդ Պետրոս Ծերատեանցն էլ հակառակ կողմից կրակ թափեց խաժամուժ, արիւնարբու ամբոխի վերայ և իրար յետեից 36 թուրք սպանեց: Վերջն՝ վրամիռչուն սպառելով՝ ինքն էլ ընկաւ թշնամու գնդակից: Այդ սահմանում միայնակ չէր Պետրոս Ծերատեանցը, ուրիշ հայեր էլ մի այլ կէտից հրացաններ էին արձակում թուրքերի վերայ: Հայերն այդ տեղ՝ զոհ տուին մինչև 12 մարդ, բայց իրանք էլ բազմաթիւ զոհ առան, որոնց թիւն անկարելի եղաւ իմանալ թուրքերին յատուկ գաղտնապահութեամբ:

Թշնամու գնդակներն այնքան բազմաթիւ էին, որ ժայռերին գիպելով կտոր կտոր էին լինում և կողմնութեւն անդրադարձամբ գիպչում էին մարդկանց երեսին: Սրանից վնասուեցին Վարդան Սիմօնեանի և Մելիք Յարութիւնեանի մի մի աչքը: Այդտեղ զոհ գնաց քաջամարտիկ երիտասարդ Խաչատուր Պետրոսեան Ղուկասեանցը, և վէրք ստացան Գալուստեաւրեանցն և ուրիշները:

Վերև, բէգերի կարգում յիշած ոմն Զիաթխան բէգն, որ իւր խմբով այդ ձորում այդ օրը, հինգշաբթի, հալածում էր փախստական հայերին, մի քանի ընկերով, գաղտ ճանապարհով անցնում է հայոց կողմը և թաքնւում է թիւերի մէջ Թող փլք փլքն ջան այրի գլխին, ուր պատուարուել էին բազմաթիւ հայեր և փորձում է այդտեղ վերևից գնդակներ ուղարկել այրի մէջ: Սակայն լաւ հրացանաձիգներից մէկը մի գնդակով այրի միջից այնպէս է խփում այդ Զիաթիանի ճակատին, որ գիւթափալ վայր է ընկնում նա ու անդէն գլորւում ցած այրի դուռը: Վերևում նրա ընկերներն են նրա ղէնքն առնում փախչում, իսկ վարում հայերն են կողոպտում վերայից հագուստն ու լանջակապ փամփուշտները, դիակը թաղցնելով քարանձաւների մէջ: Մի քանի օրից յետոյ Գրիգոր քահանայ տէր Աբրահամեանցը դանում է դիակը և ուսերի վերայ դուրս բերում քարանձաւից. բայց սրա մասին քիչ յետոյ:

(շարունակելի)

Քաջբերունի.

